**Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Քանաքեռավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկայի (19 ժամ), պատմության (15 ժամ) ուսուցչի թափուր տեղերի համար**

Մրցույթն անցկացվում է 2 փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլը անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթի մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. դիմում /Ձև1/,մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/,
3. անձը հաստատող փաստաթուղթ,
4. «Հանրակրթության մասին» ՀՀօրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը ՝ /առկայության դեպքում/
5. ինքնակենսագրություն /Ձև 5/
6. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/,
10. որակավորման տարակարգ ունենալու դեպքում ՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերցնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 24-ից մինչև սեպտեմբերի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **սեպտեմբերի 8-ին՝ ժամը 14:00-ին**, Կոտայքի մարզի Քանաքեռավանի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Կոտայքի մարզ գ. Քանաքեռավան, 11-րդ փողոց, շենք 5:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 0224-6-00-39 կամ 096-19-95-55 հեռախոսահամարներով: